ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԳՄԳՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «18» ապրիլի 2025թ.

ժամը 12:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Մ.Մովսիսյան /նախագահ/,
Ա.Ղուրշուդյան, Ն.Մուխսյան,

Քարտուղար՝ Ս.Մելքոնյան

<u>ԳՄԳՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման մասին</u>

Մ.Մովսիսյան

1) Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ՝

- «Քյավառ Սերվիս» ՍՊԸ և «Հիպերնովա» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին.

1. «Քյավառ Սերվիս» ՍՊԸ և «Հիպերնովա» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացրած հայտի հավելված N 1-ում /հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում հայտարարություն/ կոնսորցիումի անդամ «Հիպերնովա» ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը հաստատվել է 20/02/2024 թվականին, այնինչ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 60.3 հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձը պարտավոր է մինչև տվյալ տարվա փետրվարի 20-ը ներառյալ ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալություն ներկայացնել արդիական տեղեկություններ,

2. «Քյավառ Սերվիս» ՍՊԸ և «Հիպերնովա» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտի հավելված 1.2-ին կցված չեն անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն 08/04/2025 թվականի ժամը 16:22-ին էլեկտրոնային փոստով գնահատող հանձնաժողովին են ներկայացվել «Տեխնիկա» վերնագրով փաստաթղթերի փաթեթ՝ դրանք՝ ծավալի պատճառով armeps.am էլեկտրոնային համակարգ կցելու հնարավորություն չունենալու վերաբերյալ ուղեկցող գրությամբ, հանձնաժողովը որոշեց դիտարկել այդ փաստաթղթերը, որից պարզ դարձավ, որ հավելված 1.2-ի 3-րդ տողում նշված ջրատար մեքենան հանդիսանում է վարձակալված տեխնիկական միջոց, սակայն վերոնշյալ փաստաթղթերի փաթեթում բացակայում է տվյալ տրանսպորտային միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը հավաստող փաստաթուղթը՝ վարձակալության պայմանագիրը,

3. «Քյավառ Սերվիս» ՍՊԸ և «Հիպերնովա» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտի հավելված 1.4-ում նշված է, որ կից ներկայացվում է սույն տեղեկատվության մեջ նշված մասնագետների հաստատված գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, սակայն հայտում բացակայում է նշված փաստաթուղթը,

4. «Քյավառ Սերվիս» ՍՊԸ և «Հիպերնովա» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրին կցված է համաձայնագիր N5-ը, կատարողական ակտերը և օբյեկտի շահագործման ընդունող հանձնաժողովի ակտը, բացակայում են պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1, N2, N3, N4 համաձայնագրերը և հանձնման ընդունման արձանագրությունները:

- «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին.

1. «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հայտի հավելված N 1-ում նշված է 28/02/2022 թվականին հաստատված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի

հղումը, այնինչ պետք է ներկայացվեր 21/02/2025 թվականին հաստատված արդիական տեղեկությունները,

2. «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հայտի հավելված N 1-ի 2-րդ պարբերության 1)-ին կետով նշված է, որ ..... պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել որակավորման ապահովում, սակայն հրավերով նման պահանջ չկա, այսինքն՝ մասնակցի կողմից ներկայացված հավելված 1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված ձևաչափին,

3. Բացակայում է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած նախկինում կատարված պայմանագրի անբաժանելի մաս համարվող համաձայնագիր N1-ի հավելված N1-ը /օրացուցային գրաֆիկը/ և հավելված N2-ը /վճարման ժամանակացույցը/, համաձայնագիր N2-ի հավելված N1-ը /ծավալաթերթ-նախահաշիվ/ և հավելված N2-ը /վճարման ժամանակացույցը /, համաձայնագիր N3-ի հավելված N1-ը /ծավալաթերթ-նախահաշիվ/, հավելված N2-ը /օրացուցային գրաֆիկը/ և հավելված N3-ը /վճարման ժամանակացույցը /, համաձայնագիր N4-ի հավելված N1-ը /ծավալաթերթ-նախահաշիվ/ և հավելված N2-ը /վճարման ժամանակացույցը/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Հիմք ընդունելով վերոգրյալները և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04/05/2017 թվականի թիվ 526-ն որոշման 67-րդ և ԳՄԳՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման ընթացակարգի հրավերի 8.21-րդ կետերով գնահատող հանձնաժողովը որոշել է մինչև հայտերի գնահատման նիստը ստուգել մասնակիցների ներկայացրած տվյալների իսկությունը, այն է՝ 14.04.2025թ.-ին N Մ-1155 գրությամբ դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը՝ խնդրելով տրամադրել ճշգրիտ տեղեկատվություն, արդյո՞ք «Հիպերնովա» ՍՊԸ-ի և «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացվել են 2025 թվականի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրեր, թե՞ ոչ, ներկայացնելու դեպքում խնդրել է նշել դրանց ներկայացման օրվա վերաբերյալ տեղեկատվություն, որին ի պատասխան ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը 15/04/2025 թվականի N /25.9.1/16838-2025 գրությամբ հայտնել է, որ «Հիպերնովա» ՍՊԸ-ի (գրանցման համար՝ 282.110.1083264) համար 2025 թվականին ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն ներկայացված իրական շահառուների հայտարարագիր առկա չէ, իսկ 2025 թվականի փետրվարի 19-ին ներկայացվել է «Գավառի ՃՇՇ» ԲԲ ընկերության (գրանցման համար 25.130.00939) իրական շահառուի հայտարարագիրը (գրանցվել է 21.02.2025թ.):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) ԳՄԳՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի **գնահատող հանձնաժողովը որոշեց**.

1. Ղեկավարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, 30-րդ հոդվածի 6-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-ն որոշման 32-րդ կետի 19-րդ ենթակետով (այն է՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ..... ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում), 67-րդ կետի և ԳՄԳՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման ընթացակարգի հրավերի 8.21-րդ կետերով (այն է՝ **պատվիրատուն կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է)** և ԳՄԳՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման ընթացակարգի

հրավերի 2.6-րդ կետի պահանջներով՝ մերժել «Քյավառ Սերվիս» ՍՊԸ և «Հիպերնովա» ՍՊԸ կոնսորցիումի ներկայացրած հայտը,

2. Ղեկավարվել ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետի և 2025 թվականի մարտի 28-ին ԳՄԳՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/1 ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի հրավերի փաթեթի Ի-ին մասի 8.9 կետի պահանջներով կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով և «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 22/04/2025թ.-ը ժամը 18:00-ն շտկել վերը նշված բոլոր անհամապատասխանությունները և էլեկտրոնային եղանակով Գավառի համայնքապետարանի ԳՄԳՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել համապատասխան շտկված փաստաթղթերը:

Ընդ որում եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում:

3. «Քյավառ Սերվիս» ՍՊ և «Հիպերնովա» ՍՊ ընկերություններին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով դիմել պատվիրատուի ղեկավարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4) Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի ապրիլի 23-ին ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Մ.ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ն.ՄՈՒԽՍՅԱՆ
		Ա.ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ՄԵԼՔՈՆՅԱՆ